



Տ. Տ. ԿԷՈՐԳ Զ
ԿԵԶԱՓԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY



**ԱՄԵՆԱԾՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի
ԳՕՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ**



բացավ Ազգային-Նկեղեցական ժողովի գումարման և Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության ու օծման մեկ տարին:

1945 թվականի հունիս ամսին սփյուռքի բոլոր ծայրերից, Հայոց Նկեղեցու հնավանդ կանոնների համաձայն, հնավուրց էջմիածին էին հավաքվել հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ ներկայացուցիչները՝ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության և նկեղեցական մի շարք խնդիրների լուծման համար:

Հայ նկեղեցու տարգրության մեջ 1945 թվականը կնշվի, որպես բացառիկ տարեթիվ: Հայոց նկեղեցու դարավոր պատմությանն անհայտ է կաթողիկոսական ընտրության համար գումարված նմանօրինակ մի ժողով: Դա առաջին լրիվ ներկայացուցչական ազգային-նկեղեցական ժողովն էր, որին իրենց մասնակցությունը բերին բովանդակ հայ ժողովրդի ներկայացուցիչները: Այդ ժողովը Հայ նկեղեցու կյանքում արտակարգ երևույթ հանդիսացավ թե՛ իր կուռ միասնականությունը և թե՛ իր շոշափած խնդիրներով:

Հայ նկեղեցու այդ աննախընթաց միասնականությունը գրասերվեց նրանով, որ կաթողիկոսական ընտրությանը մասնակցեցին ոչ միայն էջմիածնական բոլոր թեմերը, այլ և Կիլիկիո կաթողիկոսությունը, որ Հայ նկեղեցու պատմության մեջ եզակի դեպք է հանդիսանում. իսկ որ ամենակարևորն էր՝ Կիլիկիո կաթողիկոսն՝ անձամբ մասնակցում էր ընտրությանը՝ իր եպիսկոպոսների ու աշխարհիկ պատգամավորների հետ միասին: Այդ միասնականությունը արտահայտվեց նաև նրանով, որ 1945 թվի հունիսի 22-ին, էջմիածին հնադարյան Մայր Տաճարի խորհրդավոր կամարների տակ, արտակարգ խանդավառ մթնոլորտում, Ազգային-Նկեղեցական ժողովի կողմից

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ ընտրվեց միաձայն:

Մեծ ժողովրդականություն էր վայելում Ազգային-Նկեղեցական ժողովը. պատգամավորներից բացի նրա աշխատանքներին մասնակցում էին բազմաթիվ հյուրեր ոչ միայն Սոփեական Հայաստանից, այլ և հեռավոր հայկական շատ գաղութներից: Նրա աշխատանքներին մինչև վերջ մասնակցեց նաև անդլիական նկեղեցու ներկայացուցիչ Քենտրբրիի ավագրեց Հյուլեթ Ջոնսոնը:

Ահա ինչպիսի սրտատուշ տողեր է նվիրում այդ եզակի ժողովին Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա.

«Քացառիկ Երևույթ էր մեր պատմության մեջ տեսնել համայն հայության ներկայացուցչությունը հոգևոր և աշխարհիկ դասերի՝ Մայր Աթոռի կամառների տակ, սկսած Բուենոս-Այրեսից, Հյուսիսային Ամերիկայից, Եվրոպայի բոլոր գաղութներից, Եգիպտոսից, Պարսիսից, Լիբանանից, Մյուրիայից, Պարսկա-Հնդկաստանից, նստած կողք կողքի ու Հայաստանի և Միություն հեռավոր թեմերի պատգամավորների հետ:

Տասնյակ հազար մղոններով իրարից հեռու ընկած արածուրյունները, ծովերն ու օվկիանոսները, ներկա ժամանակի հետ կապված հսկայահորդական դժվարությունները մեծածախս, չէին կարողացել արգելիլ լինել ներքին մղման և բուռն ցանկության, համայնքային հիեալուրց տանալի սրբազան կամարների տակ և կառառել իրենց պարտականությունը դեպի նկեղեցին: Այս ալեհնայալեն, ամենքի: համար տեսանելի և հսկայանալի արտաքին ապացույցն էր, թե հայ ժողովրդի համար որքան մտա է Հայաստանյայց նկեղեցին յուր Մայր Աթոռով և Ամենայն Հայոց Հայրապետությամբ, որ իրեն մագնիսական օլյո իրար էր բերել այդպիսի հոծ թվով ներկայացուցչություն աշխարհի ամեն անկյուններից, ուր հայություն կա խմբված»:

Բացառիկ ուրախառիթ պայմաններում, արտակարգ խանդավառ մթնոլորտում և

նշանակալից իրազարձու-թյուններով հարուստ մասնակաշքըանում տեղի ունեցավ Ազգային-Նկեղեցական ժողովը: Մի քանի շաբաթ ուռաջ, նախքան ժողովը սկսելը, ավարտվել էր ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պատերազմը. լսել էր հրանոթների որոտը Սվրոպայի ընդարձակ ռազմադաշտներում: Հաղթանակի երջանիկ ժպտուր շողում էր բոլորի դեմքին: Անհուն բերկրանքի օրեր էր ապրում հայ ժողովուրդը, որովհետև պարտության էր մատնվել նրա դիմերիմ թշնամի Գերմանիան՝ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայկական սպանդի գաղմակերպման հեղինակներից և սկսել էր մասնակիցներից մեկը: Ուրախ էր հայ ժողովուրդը, որ այս պատերազմին Հայաստանը դերծ էր մնացել արհավիրքներից, ջր-նորհիվ հայ և Միտոթյան բոլոր եղբայրական ժողովուրդների քաջարի մարտիկների, որոնք Կովկասի դռները անսահի բերդերի վերածե-լով ոչ միայն դիմադրավեցին թշնամու բազմաթիվ գրոհները, այլ և հո շարտեցին նրան մինչև Բեռլինից էլ ալ արևմուտք: Ուրախ էր հայ ժողովուրդը իր դարավոր երազների իրականացման ակնկալություններով հղի հեռանկանների առթիվ. ժողովի օրերին արևմտյան և արևելյան կիսագնդերում ուժգին հնչեց հայ ժողովրդի ձայնը. Սան-Տրուսնցիսկոյում՝ Միավորված Ազգերի Կազմակերպու-թյանը ներկայացված Ամերիկահայ Ազգային կորորդի դիմումին հետևեց Ազգային-Նկեղեցական ժողովի մասնակիցների դիմումը հայ ժողովրդի մեծագույն բարեկամ Ի. Վ. Ստալինին: Սույն դիմումը գրվեց Ազգային-Նկեղեցական ժողովի աշխատանքներն ա-վարտվելուց հետո նրա մի խումբ մասնա-կիցների նախաձեռնությամբ, Նրկու կիսա-գնդերից հնչող այդ ձայնը միահյուսվեցին, պահանջելով որ Ասիտական Հայաստանին միակցվեն Թյուրքիայի կողմից պատմական անարդարությամբ և բռնի ուժով գրավված հայկական հողերը, հեռաբարձու-թյուն տալով սփյուռնով մեկ ցրված հայու-թյանը վերադառնալու իր Մայր-Հայրենիքը ու իր աշունակից եղբայրների հետ միասին զարկ տալու նրա տնտեսական և կուլտուրա-կան վերելին:

Ազգային-Նկեղեցական ժողովը, բացի իր զուտ կրոնական նշանակությունից, ունեցավ նաև այլ կարևոր նշանակություններ. Գաղութահայ ժողովրդի ներկայացուցիչները, Կաթողիկոսական ընտրության կապակցությամբ Սովետական Հայաստան ժամանելով, հնարավորություն ունեցան մոտիկից ծանոթա-

նալու նրա տնտեսական ու կուլտուրական վերելքին բոլոր մարզերում, նրանց հայրենիք էին եկել ոչ միայն իրենց կաթողիկոս ընտրելու, այլ և հայրենիքի կարոտից տո-շորված սրտերով նրա սրբազան հողը համբուրելու ու նրա հարածուն վերելքին ակա-նատես լինելու համար: «...պատգամավոր-ներին մայրենի երկիր էր բերել ոչ միայն եկեղեցատիրության զգացմունքը, այլ և հայ-րենատիրության: Հայ հավատացյալ ժողովրդի պատմական առանձնահատկությունն է այդ, եկեղեցատիրությունն ու հայրենատիրությունը սերտ կապված ետևան բերել կյանքի կարևորագույն դեպքերի ժամանակ, Ս. Սաճակ-Մեսրոպների և Վարդանանց ու Ղևոնդյանց օրերից սկսած». գրում է Գարեդին Ա. կաթողիկոսը:

Կաթողիկոսական այս աննախընթաց ընտրության ժամանակ լավագույն կերպով դրսևորվեց պատերազմի ընթացքում Սովետական Հայաստանի շուրջ տեղեղծված գաղութահայ ժողովրդական լայն զանգվածների համակարգի մասնակցության արտահայտությունը և հայրենիքի շուրջ համախմբվելու միասնական կամքը: Ազգային-Նկեղեցական ժողովի գու-մարումը մեծ հետաքրքրություն առաջ բերեց զաղութահայ լայն զանգվածների մեջ ոչ միայն դեպի էջմիածինն, այլ և դեպի Մայր-Հայրենիքը: Նրանք իրենց պատգամավորներին Հայաստան ճամբելով սրտատրոփ սպասում էին նրանց վերադարձին՝ Մայր-Հայրենիքից ստույգ «խապրիկներ» ետևնալու համար:

Ծի՛նչ նորություն... Ե՛րբ պիտի գան-հարցումներ էին, որ կուգային ամեն կողմ տեղատարափի մը նման: Կուգային իրենց ղեկավարին մոտ կ'ստ զաշխատանքի մարդոց կողմն, առևտրականներ, գործատուներ, կրթական գործիչներ և այս հետապոր ափե-րուն վրա ծնած ու սնած մեր հոր ու վառ-վուռ սերունդի կողմեն:

«Ամեն տեղ պատգամաբերներու խումբ լսելու կարիքն ու պահանջը կզգացվե: Մեր պատգամաբերները իրենց հետ տարած էին զաղութի սրտին լարերը, որպեսզի մե՛նք կա-րենայինք հաղորդակից դառնալ անճամ հայերե՛քի և. Հայաստանի մեծ սրտի բարա-խումբներուն», գրում է Բուենոս-Այրեսում րատարակվող «Հայ Կեդրոն» ամսագիրը: Մայիսում աշխարհի շորս կողմերից գաղութահայության ներկայացուցիչները ժո-վր, ցամաքներ կտրելով ուխտավորների ման դիմեցին դեպի Սովետական Հայաստան իրենց պատմական այդ առաքելու-

իլունը կանոնաբերու համար Այդ իսկ տեսակետից Ազգային-Նկեղեցական ժողովը խթան հանդիսացավ Մայր-Հայրենիքի և գաղութահայ հատվածների կապերի սերտացմանը. դրան մեծապես նպաստեցին Ազգային-Նկեղեցական ժողովի պատգամալուրները, որոնք ոգևորված Սովետական Հայաստանի հարաձուռ վերելքով և ներշնչված նրա ապագայի վառլուռն հեռանկարներով, իրենց վերադարձին ոչ միայն հերքեցին գաղութահայ շրջաններում Սովետական Հայաստանի շուրջ ստեղծված հերյուրանքները, այլ և իրենց պահանջների պատմություններով վեր հանեցին Սովետական Հայաստանի հստակ մերելքը, աննախնայ խանդավառ մթնոլորտ ստեղծելով գաղութահայության շրջաններում: Ազգային-Նկեղեցական ժողովի գաղութահայ մասնակիցները հարազատ հայրենիքի ակիրքից հեռացան ծանրաբեռնված քաղցր ու անմոռաց ֆիզիոլոգիաներով և անջնջելի տպավորություններով:

Գաղութահայ մամուլը լի է այդ հուզիչ ուղեկով ու տպավորություններով, որոնք մեծ արտացոլված է Սովետական Հայաստանի կյանքն իր բազմերանգ կողմերով. նրանցից շատերը մինչև այսօր էլ շարունակում են զետեղել մամուլում իրենց ուշագրավ ու շահեկան հոդվածները. ոմանք էլ սովորաբար աշխատություններ են լույս բնծայել նվիրված իրենց այցելությանը Սովետական Հայաստանում այս բոլորը մեծապես նպաստեց գաղութահայության ուշադրության կենտրոնացմանը Մայր-Հայրենիքի շուրջը:

«Պատգամավորներու ժամանումը վերջ կուտա մեր սրտատրոփ սպասումներուն: Ներկա հասարակությունը ակնածանքով ու լարված ուշադրությամբ կունկնդրե ու կհետևի խոսածներուն: Այդ պահուն աներևակալելի արագությամբ մը մեր հայրենակիցներու մտքերը կուտան դեպի հայրենի աշխարհ, այնտեղ կտեսնեն կենդանի իրականությունը համաձայն և համամասն վերանառնի վկայությունց.....» գրում է «Հայ կեդրոն»-ը:

«Էմիգրանտի Ազգային-Նկեղեցական համագումարի պատվիրակներու վերադարձին, Միջին Արևելքի գաղութներուն առնց այցելությունց միջոցով ստեղծված ընդհանուր խանդավառությունը, հայրենասիրությունը և համագործակցությունը, այդ ժողովին լավագույն առյուտներեն մեկն է: Պատվիրակները ուր ուր այցելեցին՝ հայրենասրտազո հայությունը խուռնեցան և հոծ բազմությամբ լեց-

վեցավ նկեղեցիները և օրհաները: Անոնք առնազ կարոտով լեցին և ներշնչվեցան ամեն մեկ բան և բացատրություն, որ կխոսեր Հայաստանի լեռներուն ու դաշտերուն, քաղաքներուն և շենքերուն նկատմամբ, երբ գովքը կըլլար աճուր հարտարավեստի և մշակույթին, հոն ապրող ստեղծագործ ժողովրդին և հերոս զինվորներուն: Ունկնդիր նայությունը խոսողներն շրենքեն կախված մնաց, ամեն մեկ բառի և յոսքի ետև ուզեց տեսնել և երևակայել այն քաներն ու երևույթները, որ հաճախ չեն բավի և չեն կրեար բացատրվի:

Ստեղծված այս ընդհանուր եռուզեղր և առնազ հետաքրքրությունը վերածարծեց հայրենիքի սերը, ներշնչեց երիտասարդությունը և խանդավառեց համայն հայությունը, բուն փափաք և բաղձաք արբեցավ վերադառնալու հայրենիք և՛ տեսնելու, և՛ համարելու հայրենի հողը և՛ շնչելու աճուր ազատ օդը»: գրում է Ազգային-Նկեղեցական ժողովի մասնակից Պ. Բերդյանը նդիպտոսի ձևերը թերթում:

«Քե հրապարակով և թե մասնավոր խոսակցություններու առեմ, երբ կխոսիս հայրենիքի մասին, աճուր հուզում մը կտեսնես քեզ լսողներու նայվածքին մեջ: Կզգաս. որ կարողի զգացումը կուի առնց հոգիին մեջ, դարսի աշխարհը մոռցելու ալյուր աստիճան: Հոն, իրենց մտով ստեղծած հայու հայրենիքին մեջ կապրին այդ պահուն, կրքաքան օտարությունը, կիտխաղրվին մրտերիմ շրջապատի մը մեջ, ուր ամեն ինչ հայ է: Անոնց համար հայոց դարավոր կյանքը կխառնա մեկ կետի վրա ու մեկ վարկյանի մեջ: Կզգաս, որ առնց մտքին բոխչք քու բացատրություններեդ աճիք կանցնի, առնք կզնչեցկացեն ու կյուսավորեն քու պատմություններդ իրենց համար ընդունելի դյուրական աշխարհի մը վերածելով Հայրենիքի: Աճուր թերի ու տկար կողմերը միշտ աճեցան ես ու սրբագրելի, ու աճ իր տկարություններով և քերություններով չէ, որ կերեա, այլ իր առավելություններով և դրական կողմերով: Բազմաթիվ էին առնք, որոնք կուզեին Հայաստանը տեսնող աշխարհը համարել և աճեթիվ առնք՝ որ Հայաստանեն հիշատակ մը՝ քարի մը կտոր կամ ափ մը հող ունենալ կիտխաղրեն»: գրում է Լ. Չորմիսյանը Փարիզի «Արևմուտք» թերթում:

Դժվար է սեղծ հոգվածով վեր հանել Ազգային-Նկեղեցական այդ ժողովի նշանակությունը. նա խոշոր դեր խաղաց թե Հայ Նկեղեցու նոր վերելքի և թե հայ ժողովրդի

սփյուռքով մեկ ցրված հատվածներին Սովետական Հայաստանի շուրջ համախմբելու տեսակետից:

Ազգային-Եկեղեցական ժողովում քննարկվել ու որոշումներ էին կայացվել Հայ Եկեղեցու համար լավագույն կարևոր մի շարք խնդիրների նկատմամբ, որոնց կենսագործումը որովհ էր նորընտիր Վեհափառ Հայրապետի ուսերի վրա. գրանք էին Հոգևոր, ճեմարանի բացումը, Մայր Տաճարի վերանորոգումը, տպարանի բացումը և այլն:

Վեհափառ Հայրապետը գահ բարձրանալով պատասխանատվության խորը զգացումով ձեռնամուխ եղավ այդ խնդիրների իրագործմանը:

Ամենայն Հայոց Հայրապետի կալուստ, Ազգային-Եկեղեցական ժողովի կատարյալ վստահությունը և հավատացյալ հոռի սուկեկատ ակնկալությունները խորապես հուզում են սիրտ և ճնշում հոգին՝ ըզզացնելով ինձ պարտակառույցան ու պատասխանատվության ծանրությունը:

«Արտուտ եմ զգում հիշելով ծանր պարտականությունները և բազմապիսի հոգսերը, որ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է բարձած, և խորհում եմ՝ պիտի կարողանամ արդյո՞ք, ծերության հասակում, խաղի մտով կատարել պարտքս. պիտի հաջողվի՞՞ արդյո՞ք ինձ՝ ետեքնապես ու արտաբնապես հիմնովին վերակառուցել հայ հնադարյան բանկարծի կորոզը՝ Ս. էլիֆածեի Մայր-Տաճարը»:

«Պիտի կարողանամ արդյո՞ք նորագույն շքեղ նեմարան իր բարձրության հասցրել՝ մատակարարելով Հայ Եկեղեցուն արժանավոր հովիվներ»:

«Պիտի կարողանամ արդյո՞ք, որպես անկէ կազմակերպիլ խորհրդային Հայաստանի, խորհրդային Միության և մանավանդ Սփյուռքի Հայոց Քեմեր...».

ամենայն երկողջածությունը և պարտքի խորը գիտակցությունը գրում է նա իր անդրանիկ աշխարհաբար կոնդակում. բայց զգալով, որ ինքը մենակ չէ Հայ Եկեղեցու համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդիրների իրականացման գործում, նույն այդ կոնդակում ավելացնում է.—

«... եվ վերջապես հուսալքում է ինձ այն գիտակցությունը՝ թե մենակ չեմ, այլ ունեմ լծակից վստահելի Իրողակիցներ և վստահելի աջակիցներ՝ ի դեմս Սրբազան Առաջնորդների և բարեշնորհ փառանկարյան»:

«... ընդ կռիված են եույն գաղափարին ծառայելու և եույն պատասխանատվության ենթակա և կատարյալ վստահություն են ներշնչում իրենց համերաշխ գործուներն՝ ամբ. որ հավատ և հույս է տալիս Մեզ՝ մեր ապագա խոշոր ձեռնարկների հաջողությունը»:

Այդ «ապագա խոշոր ձեռնարկների հաջողություն» նկատմամբ ունեցած խորը հավատը ու վստահությունը գրքում են նրան անմիջապես ձեռնամուխ լինելու Հայ Եկեղեցու առաջ ծառայած լավագույն կարևոր ու անհետաձգելի այս դժվարին խնդիրներին կենսագործմանը:

Այդ խնդիրներից ամենահրատապը և առաջնահերթը հանդիսանում էր Հոգևոր ճեմարանի բացումը:

Վեհափառ Հայրապետը, դեռ նախքան իր ընտրությունը, «Բարձրագույն Հոգևոր Իշխանության քառամյա գործունեության մասին» Ազգային-Եկեղեցական ժողովին ներկայացրած զեկուցագրում ընդգծել էր ճեմարանի բացման անհրաժեշտությունը.—

«Ս. էլմիածինը, որպես համայն հայության կենտրոն, պիտի ունենա բավարար յլով կուսակրոն հոգևորականություն և քահանայությունը: Հոգևոր դաս պատրաստող հաստատությունը Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանն էր, սրբ դարգրել է գոյություն ունենալ 1917 թվից, որի հետևանքով մեծ կարիք է զգացվում թե կուսակրոն հոգևորականության և թե քահանայության, մանավանդ ժողովրդական ներքին թեմերում և Մայր Աթոռում»:

«Այսօր ի միեխրադարձում բոլորիս, կարող եմ հայտարարել, որ դժվարագույն խնդիրներից մեկը լուծվել է հիմնական կերպով և օրինական եղանակով. Ս. էլմիածնից իրավունք է տրված Հոգևոր նեմարան ունենալ: Ենթոհիվ Սովետական իշխանության հոգածու և բարոյացական վերաբերմունքի տրամադրված է Մեզ նախկին Մատենադարանը, որպես ճեմարանի շենք, վերանորոգված և հարմարեցված ճեմարանի համար: Այլև ճեմարանի պահպանության դժվարություններն էլ մասամբ լուծվել է մեր կատակերգությունը՝ խոստանալով ճեմարանին աջակցություն ցույց տալ և արդեն արձակել է ճեմարանի համար կահկարասիք»:

«Այս հիմնական աղխատանքը կատարելուց հետո, թվում է, թե իրավունք ունեմ ասելու՝ ես իմ պարտքս կատարեցի: Պատկանելի ժողովիդ է մնում՝ ճեմարանի տնտեսա-

կան սպահանջները կարիքը հոգալու:
Ազգային—ճեղքեցական ժողովը իր հու-
նիսի 19-ի և 20-ի նիստերում դրադվեց Հո-
վնոր ճեմարանի տնտեսական ապահովու-
թյան խնդիրներով: Եւս մասին ժողովի հու-
նիսի 19-ի նիստի արձանագրութիւնում
կարդում ենք.—

«Այնուհետև ժողովն անցավ Հոգևոր ճե-
մարանի պահպանման հարցի քննութիւնը:
Խոսք առավ Ամեն. Տ. Տեղակալը և մանրա-
մասն տեղեկութուններ հաղորդեց ճեմարա-
նի ուսման ծրագրի և հարակից խնդիրների
մասին, շեշտեց նաև ճեմարանը նյութական
միջոցներով ապահովելու անհրաժեշտութիւն-
ը»:

«Գեր. Տ. Արտավազը արքեպիսկոպոսը
կարդաց Հոգևոր ճեմարանի 1945—46 ուս-
տարվա ծախքերի 1.150.000 ռուբլու հաս-
նող նախահաշիվը»:

Հունիսի 20-ի նիստում, արտակարգ խա-
ղափառ միջոցառում, շարունակվեց ճեմար-
անի տնտեսական ապահովման խնդրի
քննարկումը. ժողովի պատգամավորները
հանդես եկան որոշ հանձնառութիւննե-
րով, այս մասին հետևյալն է արձանա-
գրված.—

«Տ. Արտավազը արքեպիսկոպոսն անդրա-
գառնելով օրակարգի հաջորդ խնդրին, այն
է ճեմարանի պահպանութիւնը հարցին, հայ-
տարարեց, որ ինքը հանձն է առնում հոգալ
մեկ սանի պահպանման ծախքը՝ մինչև ճե-
մարանի վեցամյա դասընթացի ավարտելը:

«Տ. Տեղակալի հիմնավորված առաջարկով
ճեմարանի յուրաքանչյուր սանի պահպան-
ման տարեկան ծախք ընդունվեց 500 դոլ-
լար»:

«Կիլիկիո Վեհ. Կաթողիկոսը հայտնում է,
որ եզրպատահյ Կարապետ Սարգիսյանը ճե-
մարանի պահպանութիւնն Փնղիս կտակել է
մի գումար, որի տարեկան տոկոսը կազմում
է 50 եզրպատական ոսկի և որ ճեմարանը իր
գոյութիւնն ամբողջ ժամանակաշրջանում ա-
մեն տարի ստանալու է 50 եզրպատական ոս-
կի: Վեհափառը հայտարարում է նաև, որ
առաջին տարվա 50 ոսկին վճարված է ար-
դեն»:

«Այս հայտարարութիւնների առաջ բերած
խանդավառութիւնն հետևանքով եղան հե-
տևյալ հանձնառութիւնները»:

«Կալիֆորնիայի թեմի առաջնորդ Տ. Մամ-
բրե նպակոպոս Գալֆայանը հանձն առավ
հոգալ սանի սանի պահպանման ծախքը թե-
մի միջոցներով»:

«Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ
Տ. Տիրան ծ. վարդապետ Ներսիսյանը նույն-

պես հանձն առավ հոգալ տասն սանի պահ-
պանման ծախքը թեմի միջոցներով»:

«Երանա-ձնդկաստանի թեմի առաջնորդ Տ.
Վահան ծ. վարդապետը հայտարարեց, որ
իր թեմը հանձն է առնում հոգալու չորս սա-
նի պահպանման ծախքը»:

«Ատրպատականի փոխ-թեմակալ Տ. Կա-
րապետ ավ. քհն. Մանուկյանը հանձն առավ
հոգալ մեկ սանի պահպանման ծախքը թեմի
միջոցներով»:

«Տ. Սահակ ավ. քհն. Սահակյանը Վրաս-
տանի թեմի անունից հայտարարեց, որ ի-
րենց թեմը կվճարի վեց սանի պահպանման
ծախքը»:

«Կալիֆորնիայի թեմի առաջնորդ Տ. Մամ-
բրեի եպիսկոպոսը հայտնեց, որ Սեդմի Տիկ-
նանց Միութեանը կհոգա մեկ սանի պահ-
պանման ծախքը»:

«Ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցը
հայտարարեց, որ ինքը հանձն է առնում հո-
գալու մեկ սանի պահպանման ծախքը»:

«Մկրտիչ Մարըլյանը հանձն առավ հոգա-
լու մեկ սանի պահպանման ծախքը»:

«ՃանիկՉազարը հանձն առավ հոգալու
երկու սանի պահպանման ծախքը»:

«Էդոնի Փափազյանը հանձն առավ հոգա-
լու մեկ սանի պահպանման ծախքը»:

«Ամերիկայի Արևմտյան թեմի պատու-
մավոր Հալի Գալոբճյանը հանձն առավ հո-
գալ երեք սանի պահպանման ծախքը»:

«Երանա-ձնդկաստանի թեմի առաջնորդ Տ.
Վահան ծ. վարդապետը միաժամանակ հայ-
տարարեց, որ ի օգուտ ճեմարանի, մի երե-
կուսին միտոսով հանգանակել է 17.000 թու-
ման և հանձն է առնում հանգանակելու ևս
20.000 թուման»:

«Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս
Գարեգին Ա. հայտարարեց, որ կաթողիկո-
սարանը ճեմարանին հատկացնում է 5.000
դոլլար»:

«Եզրպատոսի թեմի առաջնորդ Մամբրեի ե-
պիսկոպոս Սիրուկյանը խոստացավ իր թե-
մի միջոցներով ի օգուտ ճեմարանի հատ-
կացնել 3.000 եզրպատական ոսկի»:

«Որոշվեց բոլոր հանձնառութիւնները՝
սանների պահպանման ծախքերի վճարումը
շարունակել մինչև Երանց ճեմարանի վեցամ-
յա դասընթացի ավարտելը»:

«Այսպիսով ժողովը ավարտված համարեց
ճեմարանի պահպանման խնդիրը»:

«Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսը
ողջունելով ժողովականներին ճեմարանի
պահպանման խանդավառ հանձնառու-
թիւնների համար, շեշտեց Հոգևոր ճեմար-
անի մատենադարանի անհրաժեշտութիւնը»:

և այն կրօնական ու եկեղեցական գրականութիւնը ճոխացնելու կարեւորութիւնը:

«Այս առթիւ ընդունվեց Տ. Վազգէն վարդապետի առաջարկած հետևյալ բանաձևը.

«Ժողովը մեծ գոհունակութիւնով և երախտագիտութեամբ լսելով, որ Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարութիւնը Ս. Էջմիածնի վերադարձը և՛ ճեմարանի նախկին գրադարանը, ցանկութիւն և հայտնում և առաջարկ մտցնում, որ նորընտիր Վեհափառ Հայրապետը միջոցներ ձեռնարկի գրադարանը ճոխացնելու կրօնական-եկեղեցագրտական և այլ մասնագիտական ուղղութիւն գրականութիւնը»:

Վերջ հիշված հանձնառութիւնների մեծ մասը, պիտի ասել չի կատարվել. սակայն դա դեռ չի նշանակում, որ ճեմարանի պահպանման խնդիրը ձախողվել է: Վեհափառ Հայրապետի ամենօրյա հոգացողութեան առարկան է հանդիսացել ճեմարանի պահպանման գործը. անհրաժեշտ էր ճեմարանն ապահովել որակյալ դաստիարական կազմով, դասական ու գրեհական պիտույքներով, վառելիքով, սաներին բավարարել ննջարանային պիտույքներով, հազուատով, ուսմամանով, և որ ամենագլխավորն է, կազմակերպել նրանց սննդի գործը: Այս բոլոր խնդիրների լուծման համար պահանջվում էր ուժերի մաքսիմալ լարում և արդարև Վեհափառ Հայրապետը այս ուղղութիւնը մեծ աշխատանք է կատարել. նրա եռանդուն ջանքերի շնորհիւ հնարավոր է եղել մեծ դժգոհութիւններով ապահովել ճեմարանը որակյալ դաստիարակական կազմով, դասական, գրեհական, ննջարանային պիտույքներով, հազուատով, ուսնամանով, վառելիքով: սննդամթերքով և այլն: Այս բոլորը ստեղծեցին նյութական աճ բազան, որի հիման վրա հնարավոր դարձավ լավագույն կերպով կազմակերպել սաների թե՛ ուսումնադասարանական և թե՛ բազմակողմանի սպասարկման գործը:

Չնայած Վեհափառ Հայրապետի մեծ ըզբաղվածութեան, այնուամենայնիվ աշխատանքը հունի մեջ դնելուց հետո էլ նա չի դադարեցնում իր ամենօրյա հսկողութիւնը ճեմարանի թե՛ ուսումնական և թե՛ տնտեսական խնդիրների նկատմամբ. ճեմարանը միշտ էլ մնում է նրա տեսադաշտի կենտրոնում՝ վաշխելով նրա հատուկ սերն ու գուրգուրանքը: Ընթարանի նկատմամբ ցուցաբերած Վեհափառ Հայրապետի այդ հայրական հոգատարութեան շնորհիւ է, որ հազացվել են նորարաց ճեմարանի, այդ մեծածախս

գիշերօթիկ դպրոցի, ոչ միայն պահպանութեան բոլոր ծախսերը, այլ և ճեմարանը հնարավորութիւն է ունեցել իր գոյութեան առաջին տարին փակել զգալի նվաճումներով:

Այսօր, երբ ճեմարանը թևակոխում է իր գոյութեան երկրորդ տարին, նրա առաջ կոր խնդիրներ են ծառայում. ավելանում է սաների թիվը, կարիք է զգացվում նոր դաստիարակութեան, բարդանում է տնտեսական ապահովման և սաների բազմակողմանի սպասարկման գործը:

Ժամանակն է, որպիսիք Ազգային-Եկեղեցական ժողովում, խանդավառ մթնոլորտում արված հայտարարութիւնները ճեմարանի ապահովութեան նկատմամբ գործի վերածվեն. եղած հանձնառութիւնները շարունակելու համար, այլապէս վտանգի տակ չլինի կրիսիս ճեմարանի պահպանութեան գործը: Եթե Վեհափառ Հայրապետը մեծ դժգոհութիւններով և մասամբ էլ շՄՄՄ Միջխտանքի Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի աշակցութեան շնորհիւ կարողացել է հոգալ նորարաց ճեմարանի առաջին տարվա բազմաթիւ կարիքները, դա դեռ չի նշանակում, որ հանձնառութեան ստանդոնները կարող են մոռանալ իրենց վրա վերցրած պարտավորութիւնները՝ ճեմարանի պահպանման ամբողջ հոգսը բարդելով Վեհափառ Հայրապետի ուսերի վրա: Զիշտ է, Վեհափառը միջոցներ է փնտրում ճեմարանի համար նյութական ամուր և կայուն բազա ստեղծելու համար, բայց քանի դեռ այդպիսին բացակայում է, բոլորի բարոյական պարտականութեան է անթերի կատարել իրենց հանձնառութիւնները:



Ընթարանը կողմն է Հայ Եկեղեցու համար արժանալոր հովիտների պատրաստելու, սակայն Հայ Եկեղեցին չէր կարող սպասել. մինչև որ ճեմարանը կտար իր առաջին շրջանավարտները: Բազմաթիւ թեմեր գտրիկ էին թեմական եպիսկոպոս առաջնորդներից, նորարաց շատ եկեղեցիներ քահանաների կարիք էին զգում, գործող վանքեր վանահայրեր շունեին, անհրաժեշտ էր բազմաազդ դարձնել Էջմիածնի միաբանութիւնը:

Ինչպիս տեսանք կոնդակից արված մեջբերումից, Վեհափառ Հայրապետի առաջնահերթ խնդիրներից մեկն է եղել նաև «կազմակերպել Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Միութեան և մասնավանդ Միջուկի Հայոց թեմերը: Թեմերը եպիսկոպոս առաջնորդներով ապահովելու համար Վեհափառ

Հայրապետը ձեռնամուխ եղավ հենց իր գահակալության առաջին օրերին. Ազգային-Եկեղեցական ժողովի մասնակից մի շարք արժանավորագույն վարդապետներ կայսրուպետ ձեռնադրվեցին և թեմական առաջնորդներ նշանակվելով մեկնեցին իրենց պաշտոնակարգերը: Նոր վարդապետներ ու քահանայներ ևս ձեռնադրվեցին, «Արդէլ իսկ ուժիմք բանի մի վարդապետս ի նախկին սանուց ճեմարանի և ներսիսիան դարանոցի, յորոց զոմանս ձեռնադրեցաք յեպիսկոպոսութիւն վասն առաջնորդութեան թեմորդիի Ե. Հայաստանի»: Գրում է այդ մասին Վեհափառն իր անդրանիկ կոնդակում:

Նորընտիր կաթողիկոսի գահակալությունից հետո բազմաթիվ եկեղեցիներ վերաբացվեցին... որոնք ապահովվեցին նոր ձեռնադրված քահանաներով, իսկ մի քանի վերականգնված վանքեր ունեցան իրենց վարդապետ վանահայրերը:

Այնպիսի Հայրապետը իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև եկեղեցու պառակտյալ վիճակի վրա Ամերիկայի Միացյալ Նահանգներում հորդորելով վերականգնել եղկեցու միասնակալությունը. «Աստուծոյ յիշել կամի՞ք և զպառակտեալ վիճակ եկեղեցւոյս մեկոյ ի Միացեալ Նահանգս, որ ցաւ է Մեզ և համարն որչա՞միտ հայոց: Պատուէր տամք, որոց անկ է լուծանել զամենայն անշատ կազմակերպութիւնս, որք չեն հաստատեալ Հայրապետական իշխանութեամբ... Ընուտնե՞ք ժողովրդականաց Մերոց, թէ որպիսի շարեաց աղբերք են այդպիսի երկպառակութիւնք ընդ յարկաւ եկեղեցւոյ, յորոց պարտ է զդուշմանալ առ ի շինութիւն և ի պահպանութիւն Մայր Եկեղեցւոյս»:

Վեհափառի ջանքերով բաժլականաշարի կարգավորվել է նաև կապը էջմիածնի և ի սոխուտ ցրված թեմերի միջև. թեմական առաջնորդները պարբերաբար հաշվետվություններ են ներկայացնում իրենց գործունեության ու թեմի վիճակի մասին և համապատասխան հրահանգներ ստանալով՝ դեկտավորվում են ըստ այդ հրահանգների: Կապերի սերտացմանը մեծապես նպաստել են նաև Ամենայն Հայոց Հայրապետության Մերձավոր Արևելք այցելած պատվիրակությունները: Նախատեսվում է ապագայում շահամանափակվել միայն Մերձավոր Արևելքում և հնարավորություն տալ պատվիրակություններին այցելելու նաև Եվրոպայի ու Ամերիկայի թեմերը:

Այսպիսով Վեհափառ Հայրապետի արդյունավետ գործունեության շնորհիվ մի տարում, համեմատաբար շատ կարճ ժամանակ

կամիջոցում մեծ աշխատանք է կատարվել ին կեղեցիների վերաբացման, թե որոշ վանքերի վերականգնման, թե եպիսկոպոսաների, վարդապետների ու քահանաների ձեռնադրման, թե քափուր քեմերն ավելի ձեռնհաս առաջնորդներով վանքեր վանահայժեքով ու կեղեցիները ամանա-հովիվներով ապահովելու և թե էջմիածնի կապերը թեմերի հետ սերտացնելու ուղղությամբ:



Նորընտիր կաթողիկոսի ամենամեծ հոգացողության առարկաներից մեկն էլ հանդիսանում էր Մայր Տաճարի վերանորոգման խնդիրը. դեռ նախքան իր ընտրությունը նա կզգա ին-կեղեցական ժողովի ուշադրությունն էր հրավիրել այդ շահագանց կարելի խնդրի վրա.— «Ս. էջմիածնի Մայր Տաճարը 1642 տարվա հետքյուն է:.... Այդ մեծ հաստատությունն է, որի վերա կամենում եմ հրավիրել այս պատկանելի ժողովի ուշադրությունը»:

Ժողովրդական մեծ Հայրապետի՝ Հայրիկի օրերից սկսած, մոտավորապես հիսուն տարի է անցել և Մայր Տաճարը թե ներսից և թե դրսից անմխիթար պատկեր ունի... Մեր իղձն է ներքապես կամ վերականգնած տեսնել նախկին նկարազարդումը և կամ հայ զեղարկեստական նոր նկարներով նկարազարդել հայ կյանքի և Ս. Գրքի պատկերներից օգտվելով... Արտաքնապես կկամենայի կամ մարմարիտնապատ և կամ դրանիտով պատած տեսնել: Բնականաբար սա մի ցանկություն է, որ ենթակա է ժողովի և մասնագետ ճաշակավոր ճարտարապետների ու նկարիչների քննարկման: Միայն այս աշխատանքից հետո Մայր Տաճարի բազմաթիվ օտարազգի և տեղացի այցելունքը Տաճարը դիտելուց հետո կհեռանան ոչ թե զարմանք հայտնելով հայի ճարտարքություն վերա, այլ գովելով հայի անարհեստիությունը և կոպտուրականությունը»:

Ազգային-Եկեղեցական ժողովը իր հունիսի 20-ի նիստում զբաղվեց այս խնդրի քննության վրա. այդ մասին նիստի արձանագրության մեջ կարդում ենք հետևյալը.

«Այնուհետև ժողովն անցավ օրակարգի հաջորդ խնդրին՝ Մայր Տաճարի վերանորոգության հարցին»:

Նրուտադեմի Ամեն. Պատրիարքը մի բացատրականով կոչ արավ ըստը պատգամավորներին, որ հանձն առնեն հոգալու Մայր Տաճարի վերանորոգության ընդհանուր ծախքը: Կիրիկիայի Վեհափառ կաթողիկոսը խոսք առնելով կարդաց Մայր Տաճարի հիմնական

վերանորոգութիան համար արտասահմանում, որպես հայրապետական լիազոր-պատվիրակ, իր կատարած հանգանակության հաշվետվությունը, որից պարզվեց, որ ապահով բանկերում և հաստատություններում ի պահ արված կա երեսուն և յոթ հազար մեկ հարյուր տասնչորս զուլար պատրաստ գումար Ապա Տաճարի հիմնական վերանորոգությունն ապահովելու համար վեհափառն առաջարկեց հետևյալ բանաձևը.

«Ժողովը, հատուկ զեկուցում լսելով Ս. էջմիածնի Տաճարի վերանորոգության և այդ նպատակով կատարված հանգանակության մասին, անհրաժեշտ և անհետաձգելի է համարում նրա կատարումը: Ժողովը գտնում է, որ 1640 տարվա պատմական այդ կորոլի կյանքի հարատևության և երան վայելուչ վիճակում պահելու գործը հայ ժողովրդի պատվի գործն է: Բայց նկատի ունենալով, որ Մայր Աթոռի պահպանության, ինչպես նաև ճեմարանի, տպարանի և այլ կարիքները ժողովրդական հանգանակությունում և նվերներով պիտի հոգացվեն, ժողովը կկամենար, որ Տաճարի վերանորոգության այդ պատվարեր գործի կատարումը մեր մեծահարուստ ազգայիններսց մեկը կամ մի քանիսը միասին հաճեն առնելի: Ուստի և ժողովը խնդրում է Ամենայն Հայոց եռբերտի և Կիրիկիա Տ. Գաբրիել Ա կաթողիկոսներին ձեռնամուխ լինել և հարաբերության մեջ մտնել այն աճանց հետ, որոնց հաղկավոր կհամարեն այդ գործը գրուխ բերելու համար:»

Ժողովը ծափահարություններով միաձայն ընդունեց նորին վեհափառության առաջարկած բանաձևը:

Ինչ ժողովը շէր վերջացել, երբ լուր ստացվեց, որ ամերիկահայ հարուստներից մեկը ցանկանում է իմանալ Մայր Տաճարի վերանորոգության համար պահանջվող գումարի չափը:

Նորընտիր Հայրապետը, ժողովի որոշումն ու իր վաղուցվա իղձն ի կատար ածելու համար, ընտրությունից մի քանի ամիս անց ձեռնամուխ է լինում Տաճարի վերանորոգության նախնական աշխատանքներին: Ամենից առաջ անհրաժեշտ էր պարզել Տաճարի արդի վիճակը և ցույց տալ, թե ո՞ր մասերը և ինչպիսի կարիք են զգում վերանորոգման. այդ նպատակով վեհափառի կողմից հրավիրվում է մի հեղինակավոր հանձնաժողով՝ կազմված Սովետական Հայաստանի ակադեմիկոս ղեմաբերից ու մասնագետներից՝ ինչպիսիք են,—աղագեմիկոս Ա. Իսահակյանը, ժողովրդական նկարիչներ՝ Մ. Սարգսյանը, Ն.

Կոչոյանը, ճարտարապետության պրոֆեսոր Ս. Սաֆարյանը, արվեստի վաստակավոր գործիչներ՝ ճարտարապետ Մ. Կրիզորյանը, քանդակագործ Ա. Սարգսյանը և Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեի նախագահի տեղակալ՝ ճարտարապետ Վ. Հարությունյանը: Այս հանձնաժողովը, քննության առնելով Մայր Տաճարի վերանորոգության խնդիրը, նշեց այդ ուղղությամբ կատարվելիք անհրաժեշտ աշխատանքները և միաժամանակ որոշեց վերանորոգման աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման համար ստեղծել մշտական գործող հանձնաժողով՝ վեհափառի նախագահությանը. իսկ Տաճարի տեսնիկական ղրությունը ստուգելու, կատարվելիք աշխատանքների թվարկումը կազմելու, ինչպես և նախագծման բոլոր տվյալները պատրաստելու ու նախահաշիվ կազմելու համար հանձնաժողովն առաջարկեց հինգ ճարտարապետ մասնագետների թեկնածությունը:

Հետագայում այդ հինգ մասնագետներից կազմված ենթահանձնաժողովը մանրամասն ուսումնասիրելով Տաճարի վերանորոգման կապակցությամբ կատարվելիք աշխատանքները, կատարեց հանձնաժողովի հանձնարարությունն ըստ վերը նշված առաջարկանքների: Այսպիսով 1945 թվի վերջում արդեն պատրաստ էին կատարվելիք աշխատանքների թվարկումը, նախագծման տվյալները և նախահաշիվը: Ըստ կազմված նախահաշիվի Տաճարի վերանորոգման ծախսը կազմում է 3.907.559 ռուբլի. նախահաշիվը կազմված է 1936-1937 թ. թ. պետական գնացուցակների համաձայն:

Ներկայումս վեհափառ Հայրապետի կողմից շարունակվում են քանակությունները արտասահմանյան մեծահարուստ հայերի միջոցներով հոգալու հնադարյան այդ անզուգական կրթողի վերանորոգման ծախսերը: Հույսով ենք, որ այդ քանակությունները մոտ ապագայում զրական արդյունքների կհանգեն և հայ հարուստները կշտապեն իրենց անունը կապել այդ բազմադարյան նվիրական կրթողի վերանորոգության հետ, այսպիսով թե՛ փրկելով դարերի բովից անցած պատմական այդ հույակապ հուշարձանը կորստից և թե՛ հավերժացնելով իրենց անունը: Հիմնավորց այս կրթողը, որ փոթորկոտ ու արհավրալից շատ դարերի բովից անցնելով 1642 տարի կանգուն է մնացել, վերանորոգումից հետո էլ տասնյակ դարեր կշարունակի կանգուն մնալ, միաժամանակ անմոռաց հուշարձան հանդիսանալով այն բարերարի համար, որը ձեռնամուխ կլինի

երս վերանորոգման սուրբ գործին: Բարեգործության բազմաթիվ ասպարեզներ ու առիթներ գոյություն ունեն, բայց այս մեկը եղակի է իր քնույթնով ու նշանակությունը և երջանիկ կյանի այն մեծահարուստը, որին կվիճակվի իր անունը կապել բազմադարյան այս անդուգական հուշարձանի հետ: Տեղին է այստեղ հիշել հայկական պոլիգրաֆիկ երկհնակամարի ամենաշողջողուն աստղերից մեկի՝ Հ. Թումանյանի անմահ խոսքերը.

Անց են կենում սեր ու խնդում,
Գեղեցկություն, գանձ ու գան,
Մանր մեղե է, մեկ մանինը,
Մարդու գործն է միշտ աման:

Գործն է աման, լավ իմացեմ,
Որ խավում է գարեջար,
Երեկ երան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:



Վեհը, նախքան իր ընտրությունը, լուծել էր էջմիածնի համար չափազանց կարևոր մի խնդիր ևս.—Սովետական կենտրոնական իշխանությունը թույլ էր տվել էջմիածնին ունենալու իր սեփական տպարանը.

ՂԱՄԻՆ. Տ. Տեղակալը հայտնեց,— կարողում ենք այդ մասին Ազգային-Եկեղեցական ժողովի Գ նիստի արձանագրության մեջ,— որ Սովետական քառիսեամ կառավարությունը թույլատրել է Մայր Աթոռին ունենալու նաև իր սեփական տպարանը, և որ ամբողջ Սովետական Միության մեջ դա առաջին կրօնական տպարանի արտոնությունն է, որը պետք է քարծ գեանառնի:

Ժողովը խանդավառ ծափահարություններով իր գոհունակությունը հայտնեց Տեղ. Արքայանին այդ հաջողության առթիվ:

Տպարանի կարևորությունը շեշտված ենք պետևում նաև Տ. Տեղակալի Ազգային-Եկեղեցական ժողովին ներկայացրած զեկուցագրում.

Վերակառուցվող էջմիածնի համար տպարան ամենակարևոր հաստատություններից մեկն է: Եկեղեցական գրքերի տպագրության կարիքը վաղուց զգացվում էր, իսկ այժմ ևս առավել, հետզհետե նոր եկեղեցիների և մանավանդ Հոգևոր ճեմարանի բացմամբ, որը հատուկ ձևերակներ է կարողում: Տպարանը պիտի դյուրացնե և կանոնավորի նաև օրացույցի ու «էջմիածին» ամսագրի հրատարակությունն իր ժամանակին: Հիշատակված հանգամանքներն ինքնին զգալ են տալիս տպարանի կազմակերպման արագա-

ցումը: Մենք այժմ ունենք տպարան ունենալու իրավունք և տպարանի շինք. մենք հնարավորություն ունենք նաև ստանալու տպարանի ինվենտարը, որ սակայն չկարեցանք. նախ այն պատճառով, որ հնացած է և երկրորդ անհարմար համարեցինք առնել Հայրենիքից այն, որին տալու պարտականություն ունինք և երրորդ, որ ունինք արտասահմանյան հայրենասեր Հայրություն, որի առատաձեռնությունը Մենք տեսնք Հայրենական պատերազմի ժամանակ և վստահ ենք, թե նույնը պիտի տեսնենք առավել ևս Ս. էջմիածնի վերակառուցման և Հայրենիքի վերաշինության ժամանակ:

Տ. Տեղակալի այս սրտառուլ խոսքերը շեղմ արձաղանք գտան սփյուռքի ծայրերից էջմիածնի ժամանած հայրենասեր պատգամավորների շրջանում:

Ժողովի Գ նիստում «Ամեն. Տ. Տեղակալը ի ուրախություն ժողովի հայտարարեց, թե Բեյրութի պատգամավոր պ. Մկրտիչ Մարյանը հանձն է առել Մայր Աթոռի տպարանի սարքավորման և կահավորման ամբողջ ծախսը հոգալու Այս հայտարարությունն ընդունվեց բուն ծափահարություններով:

Այսպիսով, Հոգևոր ճեմարանին զուգընթաց, Մայր Աթոռը հարստացավ, իր համար չափազանց մեծ կարևորություն ներկայացնող, մի նոր հաստատություն էր ևս:

1946 թվի ապրիլ ամսին Վեհի հրամանով էջմիածնի պատվիրակությունը՝ բաղկացած Ա. Առաքելյանից և Ն. Մանուկյանից մեկնեց Բեյրութ՝ տպարանի սարքավորումը էջմիածնի տեղափոխելու հետ կապված մի շարք խնդիրներ լուծելու համար. հուլիսին պատվիրակությունը վերադարձավ հայրենիք: Տպարանի սարքավորումն արդեն պատվիրված է և մոտ տպագրում կստացվի, այնպես որ 1947 թվին Մայր Աթոռը կունենա իր սեփական տպարանը, որը հնարավորություն կտա նրան ծավալելու և էլ ավելի կանոնավոր հիմքերի վրա դնելու հրատարակչական գործը:



Նորընտիր Հայրապետի գահակալության առաջին տարին նշանավորվեց նաև մի նոր շինարարությանը:

Ետո հաճախ Վեհը նրան էր մեկնում գործով, որտեղ պաշտոնական ընդունելություններ էր ունենում. երբեմն էլ էջմիածնի միաբանության անդամները կամ թեմական առաջնորդները գործով նրանում մնալուց իջևանելու և գիշերելու հարմարություններ չէին ունենում. այդ իսկ նկատառումներով

Վեհափառը որոշեց Երևանում կաթողիկոսական վեհաբան (վիլլա) կառուցել: Նախամեծնելով այդ մեծանախ շինարարությունը Վեհափառ Հայրապետը մյուս կողմից էլ նըպատակ է ունեցել հարազատ Սովետական Հայաստանի մայրաքաղաքում հայկական դասական ճարտարապետության ոճով կառուցված մի գողարիկ կոթող կանգնեցնել: Հայաստանի կառավարությունն ընդառաջելով Վեհափառ Հայրապետի փափագին, այդ նպատակի համար Պետական օպերայի այգու մոտ ընդարձակ հողամաս հատկացրեց հայկական ոճով կաթողիկոսական վիլլա կառուցելու համար: Ներկայումս շինարարությունը թափով ծավալվում է և նախատեսվում է 1947 թվի աշնանն ավարտել շենքի կառուցման հիմնական աշխատանքները: Ենթը ճակատով նայելու է Արարատին:

Սկսելով այս մեծածախա շինարարությունը, Վեհափառ Հայրապետը հույս ունի, որ իր գեղեցիկ նախաձեռնությունը լայն արձագանք կգտնի մեր բարերարների շրջանում, որոնք շին զլանա իրենց օժանդակությունը բերելու այս գործին, նպաստելով շենքի արտաքին բարեզարդմանը և ներքին ըստ ամենայնի վայելուչ գեղազարդմանն ու կահավորմանը:



Վեհափառ Հայրապետն իր անդրանիկ կոնգրակայն գրում է.— «Հայ Եկեղեցու հեավանդ սովորուրթյան և կանոնների բիպարուրթամբ, ճախխան օծումս, ծուրն դրի իշման սեղանի առաջ և ուխտեցի ցման հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն, անխախտ պամպանել Ետա կանոնները, դավանաբան ու ավանդուրթունեները և անձնվիրուրթամբ ծառայել Հայ ժողովրդին և Հայրենիքիս»:

Եվ իրոք այս կարճ ժամանակամիջոցում Ենորճազարդ Հայրապետը ցույց տվեց իր գործունեությունը, որ նա ոչ միայն հավատարիմ է մնում Հայ Եկեղեցուն, այլ և անձնվիրուրթամբ ծառայում է հայ ժողովրդին ու Հայրենիքին: Դա ազնիվ հայ հոգևորականի հատկանշական գիծն է եղել գարեհրեցի ր վեր: Եկեղեցասիրությունը և հայրենասիրությունն անբաժան են եղել միմյանցից: Չաս անգամ դժվար է լինում որոշել, թե դրանցից որն է գերակշռել մեր մի շարք երջանակահիշատակ հայրապետների մոտ: Ս. Տ. Գևորգ Զ մեր այն սակավաթիվ հայրենասեր հայրապետների թվին է պատկանում, որոնց համար Հայրենիքի շաները միջո վեր են եղել ամեն ինչից: Ենորճազարդ Հայ-

րապետը այն հստակ համոզումն ունի, որ Եկեղեցին կաշվով է ըստ ամենայնի նպաստելու հարազատ Հայրենիքի հարաճուն հզորացմանն ու ծաղկմանը:

Նորընտիր Հայրապետը գահ բարձրացավ հայ ժողովրդի պատմության բախտորոշ շրջանում, երբ իրված էր բովանդակ հայ ժողովրդի համախմբման հարցը Մայր Հայրենիքում և Թյուրքիայի կողմից բռնագրավված հայկական հողերի միակցման խնդիրը: Սովետական Հայաստանին, կարող էր Հայ Եկեղեցին մի կողմ քաշվել և դիտողի դերում մնալ այս խնդիրների հանդեպ: Ո՛չ, չէր կարող: Հայ ժողովրդի բոլոր խավերին անխտիր հուզող այս խնդիրները հավասարապես հարազատ էին նաև Հայ Եկեղեցուն: Հայ Եկեղեցին պարտավոր էր իր արամադրության տակ եղած բոլոր միջոցներով օժանդակելու այս խնդիրների կենսագործմանը:

Եվ մեծ հայրենասեր Ամենայն Հայոց կաթողիկոս Գեվորգ Զ, Հայ Եկեղեցու հնավանդ տրագիցիաների համաձայն, հանդես եկավ իր պատմական կոչերով: Ներգաղթի գործին օժանդակելու համար նա հատուկ շրջաբերական է հղում արատասահմանի թեմերի առաջնորդներին՝ հորդորելով ամենատեսակ աշակցությունն ցույց տալ ընթացողի սուրբ գործին: «Այսօր,— գրում է նա այդ շրջաբերականում,— երբ ներգաղթի հարցը սրտաբայ ու լայն մասշտաբով է դրված՝ տեղի Հայ Հոգևորականությունը բարոյական պարտականություն ունի բացատրել իր հոտին հարցի ներկա միճակը և նորա շտապ կազմակերպման անհրաժեշտությունը և իր ոգևորչը բարոզներով անմար պահել հայ ժողովրդի դեռությունը:..... Հատկապես Առաջնորդներից վերա բարոյական պարտականություն կա մեր հեղինակությանը, ճարտար լեզվով և ազգու խոսքով աջակցելու հիշյալ կոմիտեների հաջող կազմակերպմանը, առաջ քաշելով հեղինակավոր, գործունյա և ներգաղթի գաղափարին նվիրված անձանց:» Ն. Ս. Ս. Տ. Գևորգ Զ-ի ներգաղթին աջակցելու այս կոչը մեծ արձագանք գտավ բոլոր հայկական գաղութներում: «Վեհափառը արտահույզ կոչ կընե ամենուս, որպեսզի ներգաղթի մեծ գործին համար մեր ժողովուրդը բոլորանման իր օժանդակությունը բերել տնտեսապես և բարոյապես:.. Մեր իմաստուն Հայրապետին այս հրահանգները..... պետք է արտասահմանյան բոլոր հանրեր անվերջական դործի մղեն:..... Մեր ժողովրդին համար պատմական այս պահը, սիրելիք, նվիրական պահ է, իմ որ այս պահուն իր պարտքին առաջ անտարբեր կմնա, ով որ

իր առավելագույն կարելին ի գործ չի դնել, Հայութեան անցյալ ու ապագա պատմութեան առաջ դատապարտյալ կմնա... Հեռուից ու գործարքից մեր Հայրապետին հրահանգը.....» գրում է Ամերիկայի Հայոց առաջնորդ Տիրան Եպիսկոպոսը «Հայաստանեայց Եկեղեցի» ամսագրում:

«Մեծ հաճութով կենդանաց, թե այն տեղերը, ուր ներգաղթի անմիջապահ պիտի սկսի, արդեն Հայաստանայց Եկեղեցիս առաջնորդները եռանդով գործի անցած են Հայրապետական հրահանգը գործարդելու համար.....»

«Ժրապետ հայ հավատացյալ ժողովուրդը հպարտ կարող է շքալ, որ ունի Գևորգ Զ-ի նման հայրենամուկեր Հայրապետ մը, արժանավոր հաջորդը, Լուսավորիչներու, Պարթևներու, Աշտարակեցիներու, Խորիմաններու»

«Ճաշիզմի դեմ մղված հայրենական պատերազմի օրերուն, երբ թշնամին Կովկասի դժներն ափ էլի րտեք, մեր հայրենասեր Հայրապետը (այն ատեն Ազգբնտիր Տեղակալ) Հայաստ. Եկեղեցիս անուճը պանծացուց և վարկը անհունորեն բարձրացուց հայ Սովետական Իշխանութեան, նախաձեռնելով «Մատուցի Դավիթ Հրասայի Զորայուն»-ի կազմութեան և ինք պարզեատրվեցավ Երկրկամի պաշտպանութեան մեղալուծով, գորկրծին վրա կկրե խաչին հետ, հպարտորեն:

«Իսկ այժմ, ահա, մեր հայրենասեր Վեհ. Հայրապետը ոչ միայն իր հավատացյալ հոտին կող կրնն օգնելու ներգաղթին ամեն կերպով, բարոյապես և նյութապես, այլ ինքն ալ կխոստանա աջակցիլ ներգաղթի սուրբ գործին, իր ձեռքն եղած բոլոր միջոցներով....» գրում է «Կոռնկ» շաբաթաթերթը:

Վեհ. Հայրապետի իղձը. — «Պիտի տեսնե՞մ արդոք օտարութեան մեջ ցար եւ ցրիվ ընկած հայութունը համախմբված իր հայրենի երկրում՝ Խորհրդային իշխանութեան ներքո, որ այդ խաղաղ շրջան, հոգուս ու մարմնիս հանգիստ ամա եւ հայ ժողովրդի յոգրմիտ լսեմ», այսպիսով իրականանում է արդեն. Այսօր բազմահազար հայրենաբաղձ հայեր ընդմիջում դեն շարտելով պանդխտութեան ցուպը, հայրենիք են ժամանում Միւրիայից, Կիրանանից, Իրանից, Մումբէիայից, Բուլղարիայից, Հունաստանից. սկսվել է մասսայական ներգաղթը:

Սակայն հայրենասեր Հայրապետը ուրիշ իղձ էլ ունի. — «Մենք չենք կամենում կասկածել, որ երբ Սովետական կառավարութեան արտասահմանյան հայութեան իր սրբազան հայրենիք վերադառնալու հարցն է լսուել, դեմակրտիկ մեծ պետությունները,

հատկապես ժողովրդների Մեծ Առաջնորդ ՄԱՍԻՆԻ հանճարեղ միակը, էլ կգտնեն հաւ հայ ժողովրդի արդար պահանջը. դրականապես լուծելու և երան վերադառնելու բնուէքսմը գրավված իր պապական հողերը, միացնելով այն բուն երկրին՝ Սովետական Հայաստանին.» գրում է Հայրապետը ռազիո-հաղորդման համար տրված Իր «Երկու խոսք հայ ժողովրդին» հորովածում:

Այդ իղձն ավելի լայն արծարծված են տեսնում երեք մեծ տերութունների ղեկավարներին Վեհապետի ներկայացրած դիմումի մեջ:

«Հայ եկեղեցու պետերը՝ կարողիկոսներն ու պատրիարքները, դարեւի ընթացում հայ ժողովրդի երկկայացուցիչներն են հանդիսացել պետությունների առաջ և ետա բաղձաճենների ու տառապանների, խնդիրների ու պահանջների արտահայտիչներ... Մենք՝ Ամենայն Հայց Կաթողիկոս Գևորգ Զ, հավատարիմ մեր ժողովրդապաշտպան տաղիցիաներին՝ սրբազան պարտք ունենք ի սպիտակ աշխարհի ցրված, դժբախտ հայ ժողովրդի դարձ երկկայացնելու ձեզ, խրճրելով նորա արդար լուծումը. մտնավաղթ թե այդ իմաստով բազմաթիվ դիմումներ ենք ստացել աշխարհի ամեն կողմը ցրված հայրենի կողմից:..... Այս հավատով ձեզ են դիմում Քյուրիայից վտարված հիւս ու ետ հայ գաղթականները, որոնք բախտուտ են երկրագնդի գաճազան մասերում և ետա հետ Ամենայն Հայոց հինգալորց Հայրապետությունը և խնդրում ձեզ հանալի հայրերի իրավունքը իրենց պատմական հայրենիքի վրա, որ նոքա սրբագործել են իրենց արչունով ու բռնիքով և ծածկել հիշատակաց արժանի հատուտ կուստուրական կորոչներով: Մենք խնդրում ենք առնել Քյուրիայի ձեռքից այդ բունագրավված և այժմ համարյա ամապաճ հողերը և վերադառնել իրենց իսկական տերերին ու միացնել Սովետական Հայաստանին.....»:

Վեհ. Հայրապետի գործունեության գլուխ գործոցն է հանդիսանում այս դիմումը՝ համարապետորեն արտահայտելով բովանդակ հայ ժողովրդի իղձերը. սա Հայ Եկեղեցու պատմութեան մեջ նախընթացը լուսնեցող պատմական արժեքավոր մի փաստաթուղթ է, որը Տ.Տ. Գևորգ Զ-ին դնում է Մեծ Հայրիկի կողքին, դարձնելով նրան հայ ժողովրդի երկրորդ Հայրիկը: Մերոնադարդ գահակալը ճիշտ ու հստակ ըմբռնելով ողջ հայութեան բաղձանքը կարողացել է կրակաւ, նպատակաւազաց ու պահանջող խոսքերով արտահայտել նրա միասնական կամքը: Երբ իմանից հետո Գևորգ Զ հայ կաթողիկոս-

ներքի մեջ առաջինն է, որ հրապարակ է իշ-
 նում իր խորխտ ձայնը էջմիածնից հնչեցնե-
 լով հօգուտ հայ ժողովրդի դարավոր տեն-
 շանքների իրականացման: Սակայն այս դի-
 մումը տարբերվում է նախկինում եղած
 դիմումներից. սա հետև է աղերսական բը-
 նույթ կրելուց և ներծծված է արժանապատ-
 վությամբ լեցուն խոսքերով: Հայրապետն
 այստեղ հանդես է գալիս ոչ թե՞ աղերսողի,
 հղորների գութը հայցողի, այլ պահանջողի,
 իրավատերի դերում: Թվելով հայ ժողովըր-
 դի մատուցած ծառայութունները, նա պա-
 հանջում է, որպեսզի ճանաչվին ու հարգվեն
 բազմաշարչար ու դարավոր կուլտուրայի
 տեր հայ ժողովրդի արդար իրավունքները
 և իրականացվին մեծ պետութունների կող-
 մից բազմիցս արված խոստումները: Այս
 պատմական դիմումը հրճվածքի ու երախ-
 տագիտության անհուն զգացմունքով համա-
 կեց բոլոր հայրենասեր հայերի սրտերը: Արի
 ու կրողով Հայրապետը հարազատ թարգմա-
 նը հանդիսացավ արտասահմանյան հայրե-
 նաբաղձ հայության տենշանքների, արդարա-
 ցիորեն արժանանալով նրա անկեղծ, բուռն
 ու սրտաբուխ համակրանքին. զգացված
 Հայրապետի սփոփել, մինչև սրտի խորքերը
 հուզող խոսքերից, հայ ժողովրդի հայրենա-
 կարոտ զավակները երախտագիտությամբ լի
 գնահատանքի խոսքերով են դրվատում նրա
 հայրենասիրական գործունեությունը: Ահա
 ինչպիսի սրտառուչ խոսքեր են արձանագըր-
 ված այդ մասին «Արագած» թերթի էջերում:
 «Նմա հրապարակ կուզա հայ ժողովրդի
 մեկ նոր Հայրիկը, Գևորգ Զ..... հորդորելու
 խրախուսելու, մխիթարելու, օրհնելու և ըսե-
 լու..... թե ոմնիս մի նոր հայրիկ, որ քեզ
 համար տիվ ու գիշեր գործում է, աղոթում
 է և որպես քաջ հովիվ անձը դրել է քու
 փրկությանը, բարօրությանը և հոգևոր վե-
 րածնեղյանը համար... Իմ գրիչս շատ տկար
 է արտահայտելու համար ա՛ն երախտագի-
 տական զգացումները և սրտի հուզումները,
 որ ունեցեալ գաղթաշխարհի հայութունը իր

նոր Հայրիկին գրված ավետիսներեն, հոր-
 դորներեն և օրհնութուններեն»:

Այսպիսով տեսնում ենք, որ Ամենայն
 Հայոց Հայրապետի հայրենաշունչ դիմումն
 է՛լ ավելի վերարժարծեց հայրենաբաղձ գա-
 ղութեան հատվածների սերը դեպի Մայր
 Հայրենիքը: Վեհափառի ազգօգուտ ձեռնարկ-
 ները խթան հանդիսացան և մեծապես նպաս-
 տեցին էջմիածնի հեղինակության ամձանը:
 «Նկեղեցվո շուրջ հետաքրքրվումը ավելի
 շատցած է այն օրինի վեր, որ մեր եկեղեցիի
 դերագույն պետին՝ էջմիածնի Կաթողիկոսին
 կողմն ազգօգուտ ձեռնարկներ տեղի տանե-
 ցան...» գրում է «Պայթար» թերթի Փարիզի
 թղթակիցը:

«...Ամենայն Հայոց Սրբազնագույն Կա-
 թողիկոսը հարմարագույն առիթը փախցու-
 ցած չէ հարազատ թարգմանն հանդիսանալու
 Հայ ժողովրդին և կատարելու հայրենասի-
 րական պարտականություն մը, որ Հայաս-
 տանյայց Նկեղեցվո դարավոր ավանդական
 գիծն է եղած...» գրում է «Կոռնկ» շաբա-
 թաթերթը:

Դիմումը թարգմանվեց մի շարք լեզուներ-
 րով և լայն արձագանք գտավ նաև օտար-
 ազգի մամուլի էջերում:

«...բայ կաթողիկոս Գևորգ Զ-ի կողմն
 նրեք Մեծերուն ուղղած պահանջի մը՝ ան
 կպահանջի վերադարձը Թյուրքիո կողմն
 բունագրավված հողերուն և հատուցում այն
 պատմական մեծ անարդարության համար,
 որ գործված է հայ ժողովրդին հանդեպ...»
 գրում է «Ա Պուրս էփեսոսիեն» թերթի
 խմբագրապետ Ժան Լյուկուր «Նոր լուսաբաց
 հայ ազգին համար» խորագրով խմբագրա-
 կանի մեջ:

Մենք շանացիներ տալ Վեհափառ Հայրա-
 պետի մեկ տարվա եկեղեցաշինարարական
 և հայրենասիրական բեղուն գործունեու-
 թյան ընդհանուր պատկերը:

Մաղթենք Ամենակալին զնորհել Ազգըն-
 տիր Հայրապետին երկար կյանքի բարօրու-
 թյուն Հայ Եկեղեցվո ու Ազգի:

